Գօշէնին «յայտնի քայլեր» (?) անել, եթէ քիւրդական նորակազմ լիգան թշնամական դիտաւորութիւններ ունի հայերի դէմ: Այդպիսի պատասխաններից երեւում է, որ լեզուն տուած է մարդուն իր մտքերը ծածկելու համար: Դժուար և անկարելի է ենթադրել, թէ Լօնդօնի քաղաքագէտները հաւատում են Կ. Պօլսի մէջ եղած իրանց ներկայացուցիչների «քայլերին»: Այդ «քայլերով» գուցէ կարելի կը լինի ստիպել սուլթանին, որ նա փոխի վարչական անձնաւորութիւններին, բայց աներեւակայելի է դրանցով ոչնչացնել քրիստոնեաների և մահմետականների թշնամութիւնը: Դրանով փախչում են անյապաղ և եռանդով գործելուց, որ անհրաժեշտ է Բ. Դրան հետ գործ ունենալու ժամանակ: Թիւրքաց կառավարութիւնը վաղուց համոզվել է, որ անգլիական դիպլօմատների «քայլերը» անհաստատ են:

ԱՆԳԼԻԱ

Լրագիրների մէջ տպված է հետեւեալ թղթակցութիւնը Լօնդօնից:

Այն լուրը, որ գեներալ Րօբերտս յաղթել է Էյուբ-խանին, չափազանց հանգստացրեց անգլիացիներին: Պահպանողական կուսակցութեանը պատկանող բազմաթիւ զինուորականները չափազանց մեծ նշանակութիւն էին տալիս գեներալ Բէօրօուզի յաղթվելուն և պնդում էին, որ գեներալ Րօբերտսի և գեներալ Ստիւարտի միաժամանակ ուղեւորվելը դէպի Կանդահար պէտք է անպատճառ մի որ և է տարաբաղդութեամբ վերջանար: Այժմ երբ այդ շարժումը անգլիացիների յաղթութեամբ վերջացաւ, մի և նոյն մարդիկ հաւատացնում են, որ այդպիսի գործ ոչ մի զինուորական չէր կարող կատարել:

Անգլիական մամուլի մէջ վերջին ժամանակներում տպված յօդուածներից երեւում է, որ անգլիացիք չափազանց սիրում են տիրապետութիւնը և երբ նրանց մի անաջողութիւն է պատահում, կամենում են անպատճառ վրէժխնդիր լինել: «Daily Telegraph» լրագիրը, որ արեւելեան վերջին պատերազմի ժամանակ պատերազմական կուսակցութեան օրգան էր, չափազանց վայրենի և կոպիտ յօդուածներ էր տպում: Ազատամիտ լրագիրները աւելի չափաւոր են և ուրախանալով գեներալ Րօբերտսի յաղթութեան պատճառով, իրաւացի կերպով նկատում են, որ այդ գործը չէ կարելի համեմատել ռուսաց զօրքերի Բալկանեան սարերից անցնելու, կամ Ֆրանս-գերմանական սարսափելի պատերազմի հետ: Այդ յաղթութիւնը անգլիացիներին միջոց է տալիս ուղղել իրանց գործած սխալները: Անկարելի է ի հարկէ ենթադրել, որ անգլիացիները բոլորովին ազատվեցան Էյուբ-խանից, բայց այնու ամենայնիւ որովհետեւ խանը փախել է, դեռ առժամանակ նա ոչինչ չէ կարող անել Աֆղանիստանի նոր էմիր Աբդուրախմանի դէմ:

Աֆղանական ապագայ քաղաքականութեան գլխաւոր կէտը Կանդահարն է: Անգլիացիներից շատերը պահանջում են, որ կառավարութիւնը իր ձեռքում պահէ յիշեալ քաղաքը: Այդ դիտաւորութեամբ մի պատգամաւորութիւն ներկայացաւ լօրդ Հարտինգտօնին, որ հրաժարվեցաւ վերջնական պատասխան տալ, որովհետեւ կառավարութիւնը դեռ ևս այդ հարցը չէ վճռել: Իմ կարծիքով Կանդահարը անգլիացիների ձեռքին չի մնայ: Նորերումս լօրդ Հարտինգտօն բացարձակ յայտնեց, թէ Կանդահարը սեփականացնելուց առաջ անգլիական ժողովուրդը պէտք է հարց առաջարկէ իրան, որ ի՞նչ իրաւունքով պէտք է անգլիացիները մնան այդ քաղաքի մէջ: Այս յայտնութենից երեւում է, որ անգլիական զօրքերը շուտով կը հեռանան Կանդահարի շրջականերից:

Սեպտեմբերի 4-ին պ. Գլադստօն իր հիւանդութենից յետոյ առաջին անգամ ներկայ գտնվեցաւ համայնքների ժողովի նիստին: Անդամները նրան ոգեւորութեամբ ընդունեցին:

Ժողովի անդամներից մէկը հարցմունք արաւ կառավարութեանը արեւելեան քաղաքականութեան մասին, որից օգուտ քաղելով, Գլադստօն մի ընդարձակ և գեղեցիկ ճառ ասաւ: Գլադստօն մեկնեց այն ընդհանուր սկզբունքը, որին հետեւում է ազատամիտ կառավարութիւնը Թիւրքերի վերաբերութեամբ. կառավարութիւնը կամենում է փոխել այն աւանդական կարգը, որով թէ Անգլիան և թէ Եւրոպան յայտնում էին Բ. Դրանը իրանց ցանկութիւնները: Մինչև այժմ եւրոպական պետութիւնները առաջնակարգ հարց էին համարում Թիւրքիայի ամբողջութեան պահպանելը, իսկ քրիստոնեաների իրաւացի և մարդասէր կառավարվելը՝ երկրորդական: Այսպիսի քաղաքականութեան հետեւանքն այն էր, որ Ղրիմի պատերազմից յետոյ Թիւրքիան 200 միլիօն ֆունտ ստերլինգ անգլիական փող կլանեց և մի փորձ անգամ չարաւ իր նահանգների մէջ օրինաւոր վարչութիւն մտցնելու համար: Այժմ պետութիւնները կամենում են ուրիշ կերպ վարվել. նրանք կասեն, որ եթէ Թիւրքիան երկրի մէջ իրաւացի վարչութիւն չի մտցնի, նա ինքը ստիպված կը լինի հոգալ իր ամբողջութեան և անկախութեան մասին:

Սրանից յետոյ Գլադստօն պաշտպանեց չերնոգօրցիներին և այնուհետեւ անցաւ եւրոպական համաձայնութեան քննութեանը:

«Քանի որ պահպանվում է եւրոպական համաձայնութիւնը, ասաց Գլադստօն, նա այն առաւելութիւնն ունի, որ անկարելի է ենթադրել, թէ միացած բոլոր պետութիւնները ընդհանուր ոյժերով ձգտէին մի շահասիրական, կամ անարդար նպատակին հասնել: Եւրոպական պետութիւնները կարող են սխալներ անել, կարող են մոլորվել, բայց անկարելի է հասկանալ, թէ անարդարութիւնը ինչպէս կարող է առաջնորդել պետութիւնների միացեալ գործողութիւններին:»

Ժողովի անդամներից մէկը առաջարկեց, որ կառավարութիւնը Թիւրքիայի վերաբերութեամբ ստիպողական միջոցներ գործ դնելուց առաջ հրաւիրէ պարլամենտը: Գլադստօն հրաժարվեցաւ այդպիսի խոստում տալուց: Այդպիսի խոստումը, ասաց նա, կառավարութեան ձեռքերը կը կապէր, իսկ նա, սահմանադրութեան համեմատ, իրաւունք ունի օգուտ քաղել երկրի պատերազմական ոյժերից: Նա յայտնեց նոյնպէս, որ Անգլիան հարկաւոր դէպքում միայնակ էլ կը գործի: Բացի այս Գլադստօնը կրկնեց իր նախկին բոլոր խոստումները. նախ, նա պարտաւորվում է չը հեռանալ եւրոպական միութիւնից, քանի որ այդ կարելի կը լինի և երկրորդ՝ կառավարութիւնը պարտաւորվում է իրագործել Բերլինի դաշնագրի բոլոր վճիռները:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

Կ. Պօլիս, 3 սեպտեմբեր 80

Վերստին նախարարական փոփոխութիւններ. նախկին առաջին պաշտօնեայ Սաիտ բաշա, որ ամբողջ Եւրոպայի դժգոհութիւնը հրաւիրած լինելուն պաշտօնէ զադրեցուցած էր Սուլթանը, այսօր վերստին նորա կը յանձնէ երկրին վարչութիւնը. Սաիտի առաջին նախարարութեան օրով զինքն լաւ ճանչցանք, քրիստոնէից անհաշտ թշնամին. կերեւայ թէ եւրոպական կառավարութիւնք շատ դժգոհ են: Պ. Կօշէն, որ իրեն դիւանագիտական յաղթանակ մը սեպեց Սաիտի պաշտօնանկութիւնը, սաստիկ զայրացած կը թուի և չըմբռնէր թէ ինչպէս Թիւրքիա իւր այս նեղ վիճակին մէջ տակաւին միտքը դրած է Եւրոպայի խաղ խաղալ: Սաիտի գործոց գլուխ անցնիլն հայոց համար խիստ աննպաստ է. «Հագիգաթի» սպառնալիքներն կրնան իրականութիւն լինել: Սով, բռնի համաճարակ հիւանդութիւնք, ձեռքի տակէ կոտորածներ, ահաւասիկ այդ Մօնկօլ նախարարի ծրագիրը Հայաստանը նուաճելու համար: Եւ այս ենթադրութիւն չէ. Լէվանդ Հէրալդ լաւ կերպով մը պարզեց աշխարհի աչքին Սաիտի այս քաղաքականութիւնը և ջնջուեցաւ, ինչպէս կը յիշէք: Այժմէն խօսք կայ 10000 լազ ընտանիք Հայաստան չիւր խրկել: —Սաիտի պաշտօնեայ լինելու գոյժին հետ տարածուեցաւ ուրախառիթ լուր մը, որ է եւրոպական տէրութեանց Բ. ծանուցագիրն հայոց խնդրոյն նկատմամբ՝ ի պատասխանի Բ. Դրան առ նոսա խրկած Հայաստանի բարեկարգութեանց ծրագրին: Այս նոր ծանուցագիրն տակաւին ամբողջովին չը հրատարակվեցաւ, սակայն կը հաստատեն թէ մեծ վրդովում պատճառած է կառավարութեան, վասն զի շատ խիստ կերպով գրուած է կըսեն: Եւրոպական տէրութիւնք այս ծանուցագրով կը յայտարարեն եղեր թէ իրենք անօգուտ կը գտնեն Դրան ներկայացուցած ծրագիրներն բարեկարգութեանց մասին, և թէ աւելի ընդարձակ կերպով պէտք է լինեն բարեկարգութիւնք. թէ 17%-ը չէ հայոց թիւը, այլ շատ աւելի, ինչպէս կը հաստատեն Պատրիարքարանի վիճակագրութիւններն և կը պահանջեն, որ Բ. Դուռը նոր վիճակագրութիւն մը ընէ. բայց կը յաւելու ծանուցագիրը, խնդիրը հայոց թւոյն աւելի կամ նուազ լինելուն վրա չէ, ինչ որ ալ լինի նոցա թիւը, մասնաւորապէս հայոց համար բարեկարգութիւնք պէտք է լինին ըստ Բերլինի դաշնագրին:

Եւրոպիոյ առաջարկած բարեկարգութեանց վրա տակաւին կատարելապէս ստոյգ տեղեկութիւններ չը ստացանք, բայց բաւական հաւատարիմ աղբիւրներէ հետեւեալներն կը լսենք: Հայաստանի վարչական մարմնոյ մէջ բազմաթիւ հայեր պէտք է լինեն իբր քաղաքապետ, խորհրդական, դատաւոր և այլն: Հայաստանի կառավարիչը քրիստոնեայ պիտի լինի (այս վերջին կէտին վրա կըսուի թէ չեն պնդեր եղեր իբր Sine qua non պայման մը), կառավարիչը որոշեալ երկար ժամանակի մը համար պիտի մնայ. եւրոպական յանձնախումբ մը պիտի պատրաստէ տեղական ինքնավարութեան օրէնքները, թէ՝ Բ. Դուռը չը պիտի կրնայ այլ ևս ժխտողական կերպով պատասխանել տէրութեանց ծանուցագրին և նոքա պիտի հսկեն բարեկարգութեանց գործոյն: Ինչպէս յիշեցինք լաւ մը չենք կրնար երաշխաւորել այս տեղեկութեանց կատարեալ ստուգութեանը, սակայն տեսնելով մէկ կողմէ Բ. Դրան վրդովումը, Թիւրք թերթերուն օրըստօրէ կատաղիլը մեզ դէմ, և միւս կողմէ հայոց բարձրագոյն շրջանակներու մէջ տիրած խնդութիւնը, կըրնամք ենթադրել թէ գործերն լաւ վիճակի մէջ են: Պէտք է նաև այս ալ գիտնալ թէ այսուհետև դժբաղդութիւն պիտի ունենամք շատ ցաւալի լուրեր ալ հաղորդել, զի Բ. Դուռը հարաչար պիտի հարուածէ զՀայաստան: Կը գտնէք ներփակեալ Stamboul-ի մէկ յօդուածը, յորմէ կը տեսնէք թէ «Հագիգաթ» Սուլթանի անձնական օրգանը ինչ գազանական խորհուրդներ կուտայ, պարզապէս հայոց կոտորած կը քարոզէ. մեզ անկ է համբերել և աշխատել: Պատրիարքի և կառավարութեան յարաբերութիւններն բոլորովին խզած են. տաճկաց պայրամի առթիւ նախարարաց այցելութեան չը գնաց Պատրիարքը. Թիւրք թերթերն ուշադրութիւն ըրին այս կէտին: Հայոց և Բ. Դրան թշնամութիւնը ալ գաղտնիք մը չէ: Կառավարութիւնը Պատրիարքէն կը պահանջէ այն բողոքագիրը զոր վանեցիք Ազգ. Ժողովոյ մատուցին իրենց կրած հարստահարութեանց մասին. Պատրիարքը այդ բողոքագիրը դեսպանաց մատոյց, ինչպէս գրած ենք արդէն և նոքա պէտք եղած դիտողութիւններն ըրին Բ. Դրան: Բ. Դուռը կը պահանջէ Պատրիարքէն այդ բողոքագրի պատճէնը, իսկ Պատրիարքը չը յանձներ, զի այսպիսի պահանջումը անվստահութիւն կը նշանակէ և նախատինք է իրեն: Յայտնի է որ Բ. Դուռ. այս բողոքագիրը կուզէ ձեռք անցնել որպէս զի ստորագրողները ճանչնայ և նոցա դէմ խիստ միջոցներ ձեռք առնու. նորէն պահանջ, նորէն մերժում. ասոր վրա կառավարութիւնը խիստ յանդիմանագիր մը կը խրկէ Պատրիարքին, յորում կը յայտնէ թէ ինքն կրօնական պաշտօնեայ մը իւր պաշտօնէն վեր գործերու կը միջամտէ, թէ ինքն պէտք է հնազանդի կառավարութեան հրամանաց և այդ բողոքագիրը յանձնէ, որ թշնամական և անբարոյական գրուած մէ (!!) և թէ ինքն Պատրիարքը այդպիսի ցոյցերն դրդելէ պարտի ետ կենալ: —Անշուշտ Պատրիարքը արժանաւոր պատասխան կուտայ: Սաիտի օրով գործերն աւելի պիտի վատթարանան, նորա գաղափարն էր Սուլթանի հրամանաւ Պատրիարքը պաշտօնանկ ընել, վայ թէ այդ գաղափարը յանդգնի ի գործ դնել ու ձեռնարկել, այն ատեն կը տեսնենք: Քրդական միութեան հաստատութեան զօրաւոր մըղում պիտի տայ Սաիտ:

Ռուսիոյ Կայսեր տարեդարձի առթիւ դեսպանատունը մեծ սեղան տրուեցաւ, հրաւիրեալ էր Պատրիարքն և փառաւոր ընդունելութիւն գըտած է:

Պատրիարքը այցելութիւն տուաւ Անգղիոյ դեսպանին, և խնդրեց որ հոգի Վեհափառ Թագուհւոյն գահուն ոտքը դնել հայոց ազգի ջերմ երախտապարտութիւնը այն մեծ բարերարութեան համար, որով նորին վեհափառութիւնը կը նուիրագործէ հայկական խնդիրն և նորա գոյութիւնը ու լուծումը եւրոպական հարց մը լինելն կը վերահաստատէ: Կը յայտնէ նաև հայոց ազգի շնորհակալութիւններն առ նոր նախարարութիւնն, որ տաճկաց նենգութիւններէն չը խաբուիր՝ և Հայաստան անունը պաշտօնապէս կը ճանչէ և Հայաստանի բարերարութեանց համար իւր զօրաւոր աջակցութիւնը ու պաշտպանութիւնը կը շնորհէ: —Դեսպանը շատ կը զգածուի Սրբազանի յայտարարութիւններէն և կաւելնէ թէ նոյն օրն ծանուցագիրն Բ. Դրան մատուցի:

Թիւրքիոյ մայրաքաղաքին մէջ հայկական խնդրոյ առթիւ այսպէս յուզեալ վիճակի մէջ ենք. Թիւրք մամուլը և նորա դէմ հայ ու եւրոպացի մամուլն շարունակ կռւոյ մէջ են, սա տարբերութեամբ որ Թիւրքերն ուզածնին գրելու ազատ են, մինչդեռ քրիստոնեայք կարող չեն պատասխանել ըստ կամս, զի իրենց թերթերն կը ջնջուին անմիջապէս, այս է հաւասարութիւնը: Այսօր «Հագիգաթ» և «Օսմանլը (այս թերթը Թիւրքերէն և Ֆրանսերէն կը հրատարակուի) Թրքաց կողմէ և իրենց դատերն պաշտպանել կուզեն Եւրոպիոյ առաջ. կատարեալ խելագար թերթ մէ և անցեալ շաբթու կը պահանջէր քրիստոնեայ խմբագրաց, հայ, յոյն, եւրոպացի, Տաճկաստանէն աքսորունին) թշնամական հրատարակութիւններ կրնեն մեզ դէմ, սակայն թղթատարը շուտ կը մեկնի առաւօտուն, յաջորդ նամակի կը մնայ:

Հայկակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 սեպտեմբերի: Բեռլինեան լրագիրը հաստատ աղբիւրից լուր է հաղորդում, որ կառավարութիւնը սկզբունքով վճռել է ոչնչացնել տպագրական գործերի Գլխաւոր Կառավարութիւնը: Նահանգների մամուլին մայրաքաղաքի մամուլի իրաւունքները կը տրվեն: Վերջը ցենզուրան բոլորովին կոչնչացնվի, տպագրական յանցանքների համար պատասխանատուութեանը կենթարկվեն հրատարակողները, կամ խմբագիրները: Լրագիրները այլ ևս ճնշող միջոցների չեն ենթարկվի:

ՌԻԳԱ, 9 սեպտեմբերի: Երէկ երեկոյեան 7 ժամին Օրկանիա կորպօրացիային պատկանող այստեղի պօլիտեխնիկումի գերմանացի 20-ից աւելի ուսանողներ, չը կամենալով բացատրութիւն տալ նրանցից վիրաւորված ռուս ուսանողի, փայտերով յարձակվեցին նրա վրա և կիսամահ արին: Այդ կորպօրացիային չը պատկանող պօլիտեխնիկումի ռուս և ուրիշ ուսանողները չափազանց վրդովված են այդ ցաւալի անցքի պատճառով: Նրանք խնդրեցին իշխանութենից իրանց պաշտպանել կորպօրացիայի կամայականութեան դէմ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ